Հաշվետվություն

2018 թվականի մարտի 4-ից 7-ը Բրյուսելում կայացած «ԵՄ քաղաքացիական պաշտպանություն» ֆորումին մասնակցության

1. Անունը, ազգանունը.

   Արտավազդ Դավթյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

   Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության տնօրենի տեղակալ, փ/ծ գնդապետ:

3. Գործուղման վայրը և ժամկետները.

   Բելգիայի Թագավորություն, ք. Բրյուսել, 2018 թվականի մարտի 4-ից 7-ը:

4. Հրավիրող կողմը.

   Եվրահանձնաժողովի բնակչության պաշտպանության և մարդասիրական օգնության հարցերով գլխավոր քարտուղարություն (DG ECHO):

5. Գործուղման նպատակը.

   Ուսումնասիրել ԵՄ անդամ պետությունների լավագույն փորձը, մասնակցել բնակչության պաշտպանության և աղետների ռիսկերի կառավարման ոլորտում նոր մոտեցումների քննարկումներին և ձեռք բերված փորձը ապագայում կիրառել Հայաստանի Հանրապետությունում:

6. Քննարկված թեմաները.

   1) աղետներին պատրաստվածության ամրապնդում.
   2) արտակարգ իրավիճակներին արձագանքման ընթացակարգերի պարզեցում.
   3) կանխարգելման ընդլայնում,
   4) Եվրոպական հարևանության ներսում կայունության ապահովում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

   Քննարկվել են ռիսկերի գնահատման ուղղությամբ գիտելիքների մակարդակի բարձրացման, աղետների ռիսկերի նվազեցման և կանխարգելման,

արտակարգ իրավիճակներին արձագանքման միջոցառումների համար նախատեսվող լրացուցիչ ֆոնդերի, աղետների ռիսկի կառավարման ոլորտում տարածաշրջանային համագործակցության և այլ հարցեր:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

   Չի եղել:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

   Հայաստանի Հանրապետության աղետների ռիսկի նվազեցման ռազմավարությունը համահունչ է Եվրոպական Միությունում իրականացվող ռազմավարությանը, բխում է Աղետների ռիսկի նվազեցման 2015-2030թթ. Սենդայի գործողությունների ծրագրից, ինչպես նաև ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության շրջադարձային կոնվենցիային կից Փարիզի համաձայնագրի գաղափարներից:

10. Գործուղվողը.

    ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության տնօրենի տեղակալ, փ/ծ գնդապետ Արտավազդ Դավթյան:

11. Ստորագրությունը, ամսաթիվը.

    27.03.2018թ.: